Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի «Լեռնակերտի նախադպրոցական
ուսումնական հաստատություն»
համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի
2026 թվականի սեպտեմբերի 14-ի N 36-Ա հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակի պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները /չափորոշիչները/ | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը /նյութերը/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակ (0,585 դրույք)**<br>**(1 աշխատող)** | **1. Որակավորման պահանջները՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝**<br>1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ<br>**2. Ընդհանուր պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝<br>1)տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին<br><br>2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝<br>ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝**<br>1)դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի , երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար | 1)դիմում (ձև 1)<br>2)անձը հաստատող փաստաթուղթ<br>3)կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)<br>4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/<br>5)ինքնակենսագրություն<br>6)մեկ լուսանկար՝ 3*4չափի<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝ ՀայաստանիՀանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական կցագրման վկայական<br>9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր<br>( դրանց առկայության դեպքում): |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օրենսգիրքը», «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.<br><br>բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի, դաստիարակչական աշխատանքի տեսության և մեթոդիկայի հիմունքները: | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով** |

| **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
|---|---|---|
| **Վայրը**՝ ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ համայնք Բնակավայր Լեռնակերտ 9-րդ փողոց 4/1<br>**օրը**՝ 2026թ. հոկտեմբերի 19-ին, ժամը՝ 11:00-ին | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «**Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հաստատություն**» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:<br>հեռ. 094763100<br>Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբեր 2024 թվական N 1981-Ա/2 հրաման ):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամենօր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: | 2026 թվականի հոկտեմբերի 12-ը ներառյալ |